ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ, 134 և 146-րդ հոդվածներով ներկայացնում ենք Թադևոս Էդիկի Ավետիսյանի, որպես Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամի՝ Ազգային ժողովի «Հայաստան» և «Պատիվ ունեմ» ընդդիմադիր խմբակցությունների կողմից համաձայնեցված թեկնածությունը:

Նկատի առնելով այն հանգամանքը, որ Թադևոս Էդիկի Ավետիսյանը հանդիսանում է Ազգային ժողովի պատգամավոր և հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումը, ըստ որի եթե թեկնածուն զբաղեցնում է ընտրվող կամ նշանակվող պաշտոնի համար Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող պաշտոն, ապա այդ պահանջներին վերաբերող փաստաթղթերը կարող են չներկայացվել, կից ներկայացվում են խմբակցությունների որոշումները, թեկնածուի գրավոր համաձայնությունը և ինքնակենսագրությունը:

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամի թեկնածուին կներկայացնի Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյանը:

«Հայաստան» խմբակցության ղեկավար՝
Ս. Օհանյան

«Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար՝
Հ. Մամիջանյան

20.02.2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

(Քաղվածք «Հայաստան» խմբակցության նիստի)

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ, 9-րդ, 134-րդ և 146-րդ, «Տնտեսական մրցակցության և սպառողների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ և 29-րդ հոդվածներով:

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը և «Պատիվ ունեմ» խմբակցության հետ քննարկման արդյունքները,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամի համար, որպես ընդդիմության համաձայնեցված միասնական թեկնածու առաջադրել Թադևոս Էդիկի Ավետիսյանի թեկնածությունը:
2. Թադևոս Էդիկի Ավետիսյանի թեկնածությունը խմբակցությունների անունից կներկայացնի Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյանը:

«Հայաստան» խմբակցության ղեկավար՝
Ս. Օհանյան

19.02.2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

(Քաղվածք «Պատիվ ունեմ» խմբակցության նիստի)

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ, 9-րդ, 134-րդ և 146-րդ, «Տնտեսական մրցակցության և սպառողների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ և 29-րդ հոդվածներով:

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության կանոնադրությունը և «Հայաստան» խմբակցության հետ համատեղ քննարկման արդյունքները,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամի համար, որպես ընդդիմության համաձայնեցված միասնական թեկնածու առաջադրել Թադևոս Էդիկի Ավետիսյանի թեկնածությունը:
2. Թադևոս Էդիկի Ավետիսյանի թեկնածությունը խմբակցությունների անունից կներկայացնի Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյանը:

«Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար՝
Հ. Մամիջանյան

19.02.2026թ.

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՊԱՇՏՈՆՈՒՄ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՐՊԵՍ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ես՝ Թադևոս Էդիկի Ավետիսյանս, տալիս եմ իմ համաձայնությունը Հայաստանի Հանրապետության մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամի թեկնածու առաջադրելու համար:

Միաժամանակ հայտարարում եմ, որ Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամ ընտրվելու դեպքում՝ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան դադարեցնում եմ քաղաքական գործունեությունս, այդ թվում՝ կներկայացնեմ պատգամավորի պաշտոնից հրաժարականի մասին համապատասխան դիմումը /կհրաժարվեմ պատգամավորական լիազորություններից/:

Թադևոս Ավետիսյան

19.02.2026թ.

ԹԱԴԵՎՈՍ ԷԴԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծննդյան ամսաթիվը՝ 1976թ. ապրիլի 19:
Կրթությունը՝
1983-1993թթ՝ ավարտել է Երևանի N 88 միջնակարգ դպրոցը՝ գերազանցությամբ:
1994-1999թթ՝ ավարտել է ԵրԺՏԻ, ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետը «Համաշխարհային էկոնոմիկա» մասնագիտությամբ՝ գերազանցության դիպլոմով:
1999-2002թթ՝ ավարտել է ԵՊՏԻ, «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ ասպիրանտուրան՝ առկա ուսուցմամբ:
2002թ.՝ ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ (թեման՝ «Հարկային համակարգի ազդեցությունը օտարերկրյա ներդրումների ներգրավման գործընթացների վրա»):
2009-2012թթ՝ ավարտել է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան և ստացել է մագիստրոսի աստիճան՝ «Իրավագիտություն» մասնագիտությամբ:
2014թ.՝ ստացել է դոցենտի գիտական կոչում՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

Շուրջ 3 տասնյակ գիտական հոդվածների, գիտական, ուսումնական, մեթոդական և հետազոտական աշխատանքների հեղինակ կամ համահեղինակ է:

Աշխատանքային գործունեությունը՝
1999թ. մինչ այժմ՝ ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի, իսկ 2025 թվականի սեպտեմբերից ֆինանսական շուկաների և ինստիտուտների ամբիոնի դասախոս (2014թ.-ից՝ որպես դոցենտ)՝

- դասավանդում է «Միջազգային ֆինանսներ», «Միջազգային ֆինանսատնտեսական հարաբերություններ», «Միջազգային տնտեսագիտություն-1», «Միջազգային տնտեսագիտություն-2», «Արժութային շուկաներ և արժութային քաղաքականություն» դասընթացները,

2003-2006թթ՝ ՀՀ Նախագահի խորհրդականի (հակակոռուպցիոն մոնիտորինգի հանձնաժողովի նախագահի) օգնական՝

- որպես փորձագետ մասնակցել է ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի N 1522-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակմանը և դրա իրականացման մոնիտորինգի աշխատանքներին,
- որպես փորձագետ մասնակցել է ՀՀ առողջապահության, սոցիալական պաշտպանության և կրթության ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրության աշխատանքներին,

- իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացրել է հակակոռուպցիոն ազդեցության փորձագիտական եզրակացություններ:

2006-2008թթ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության զբաղվածության բաժնի պետ՝

- մասնակցել է զբաղվածության պետական քաղաքականության ոլորտը կարգավորող իրավական ակտերի, զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի նախագծերի մշակմանը, զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի իրականացման մոնիթորինգի և գնահատման աշխատանքներին:

2008-2017թթ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ՝

- ղեկավարել է ՀՀ զբաղվածության ոլորտի զարգացման ռազմավարության և 2013-2018թթ. միջոցառումների ծրագրերի, ՀՀ զբաղվածության ակտիվ քաղաքականության նոր մոդելի հայեցակարգի (2013թ. դրական եզրակացություն է ստացել Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից) մշակման աշխատանքները:
- ղեկավարել է հանրային ծառայության ոլորտում վարձատրության միասնական համակարգի ներդրման, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության բարեփոխումների նպատակով ստեղծված մասնագիտական աշխատանքային խմբեր, որոնք մշակել են օրենսդրական փոփոխությունների մեծեծավալ փաթեթներ:

22.03.2017թ. - 22.09.2017թ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի գլխավոր խորհրդական՝

- համակարգել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի կառուցվածքի օպտիմալացման աշախատանքները:

22.09.2017թ. - 11.06.2018թ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ՝

- համակարգել է աշխատանքի, զբաղվածության և աշխատավարձի քաղաքականության, աշխատանքային միգրացիայի կարգավորման, ժողովրդագրության քաղաքականության, տարեցների քաղաքականության ոլորտները:

2019-2023թթ.՝ որպես «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ ակտիվ մասնակցություն է ունեցել Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելի մշակման, ինչպես նաև ՀՀ աշխատաշուկայի վերլուծություն և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ, երիտասարդների աշխատանքային միգրացիայի ազդեցությունը և կանխարգելման հնարավորությունները համայնքների ժողովրդագրական իրավիճակի փոփոխության գործընթացում և այլ հետազոտական աշխատանքներում:

2018-2021թթ.՝ որպես «Հրայր Մարուխյան» հիմնադրամի փորձագետ մասնակցել է Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի հիմնախնդիրներին,

մենաշնորհների դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործման, վառելիքային շուկայի առկա հիմնախնդիրների բացահայտման և հնարավոր լուծման ուղիների, մանրածախ առևտրի ոլորտում համակենտրոնացման միտումների, Հայաստանում աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում խնդիրների բացահայտման, Եվրասիական տնտեսական միության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ազատ առևտրի գոտու ստեղծման հնարավորությունների բացահայտման, ԵԱՏՄ ազատ առևտրի համաձայնագրերի և ներքին շուկայի պաշտպանություն վերաբերյալ հետազոտական աշխատանքներին,

2021թ. օգոստոսի 2-ից մինչ օրս Ազգային ժողովի պատգամավոր (ԱԺ «Հայաստան» խմբակցություն): ՀՅԴ անդամ:

30.08.2021 - 01.07.2022 ԱԺ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ:

09.01.2023թ. մինչ օրս ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:

Վերապատրաստման դասընթացները՝
2006թ.՝ «Միջազգային առևտրի խթանման խնդիրները Հայաստանում», ԱՄՆ ՄԶԳ, ԵՊՏԻ, Երևան,
2007թ.՝ «Ընդառաջ երիտասարդության զբաղվածությանը», ՀԱԳ(Գ)Մ, ԱՄԿ, Երևան,
2007թ.՝ «Երիտասարդների զբաղվածության խթանման առաջնահերթությունները», ԱՄԿ Միջազգային ուսումնական կենտրոն, Թուրին,
2008թ.՝ «Զբաղվածության ոլորտում ռազմավարական գերակայությունների որոշումը», ԱՄԿ Միջազգային ուսումնական կենտրոն, Թուրին,
2009թ.՝ «Զբաղվածության ակտիվ ծրագրերի և մասնագիտական ուսուցման աջակցությամբ աշխատանքային միգրանտների վերաինտեգրումը», ՄՄԿ, Չեխիայի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, Պրահա,
2009թ.՝ «Զբաղվածության համակարգի զարգացման մարտահրավերները», ԱՄՆ ՄԶԳ, Կրթության զարգացման ակադեմիա, Չիկագո,
2013թ.՝ «Աշխատանքային միգրացիայի քաղաքականությունները ԵԱՀԿ անդամ երկրներում», ԵԱՀԿ ԺՀՄԻԿ, Վարշավայի գրասենյակ,
2010թ., 2013թ., 2016թ.՝ Քաղաքացիական ծառայության վերապատրաստումներ, ՀՀ ԱՍՀՆ ԱՍՀԱԻ, Երևան,
2023թ.՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կազմակերպած «Միջազգային տնտեսական հարաբերություններ» թեմայով մասնագիտական վերապատրաստում,

2024թ.՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կազմակերպած «Դասավանդման մեթոդաբանություն» թեմայով վերապատրաստում,
2025թ.՝ «Էդուքս» կրթական հիմնադրամի կազմակերպած «Բանկային ռիսկեր» և «Ֆինանսական վերլուծություն» թեմայով մասնագիտական վերապատրաստում:

Պարգևատրումները՝
2012թ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մեդալ:
2014թ.՝ ՀՀ վարչապետի հուշամեդալ:

Լեզուների իմացությունը՝ տիրապետում է հայերեն, ռուսերեն և անգլերեն (հաղորդակցման մակարդակ) լեզուներին:

Անձնական տվյալները՝
ամուսնացած է, ունի երկու զավակ: